Աննա Բաբուշյան

Ճանապարհ

Սարդոստայն է ուղին կյանքի

Վախերով է հաճախ հյուսված,

Բայց թե գտնես ելքը ճամփի

Չի կտրվի թելը բախտի :

Ճանապարհն այս լաբիրինթ է

Կխճճվես, թե չփնտրես,

Կյանքը ինքը մի անհայտ է

Կապրես, թե ճիշտ լուծում գտնես:

Կանգառ չկա կյանքի ճամփին,

Ժամանակն է գնացքավարն,

Թե մոլորվես քեզ չի սպասի,

Ի'մ բարեկամ ,առաջ քայլի'ր:

Ընտրիր ինքդ քո ճիշտ ուղին

Քայլիր ազնիվ ճանապարհով,

Քանզի ճամփան ուր էլ ձգվի

Մարդուն դեպ մարդ պիտի տանի:

Ինքդ քեզ տանող ճամփեն չկորցնե՛ս

Քանզի բանալին սա է հաղթության,

Թե խղճիդ տանող դուռը չգոցես

Ուղին այս կյանքի պատվով դու կանցնես:

20.05.2024

ԱԽՈՒՐՅԱՆ